



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ Տ Ե Ղ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆԻՆԻՍԻ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1/2

„01,,դեկտեմբերի 2021թվականի գ.Տեղ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ Տ Ե Ղ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍԻ**

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝

Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդադյունյանը

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝

Տեղ համայնքի նորընտիր ավագանու թվով 14 (տասնչորս) անդամներ՝

1. Ղուլլունց Դավիթ Արամայիսի
2. Միրզոյան Արամ Գագիկի
3. Բաղդասարյան Նազիկ Մարատի
4. Ղուկասյան Արագած Արշավիրի
5. Միքայելյան Աննա Միքայելի
6. Սիմոնյան Լորա Ռաֆիկի
7. Դալլաքյան Արման Յուրիկի
8. Առաքելյան Վահե Վարդանի
9. Կարապետյան Արշակ Արամի
10. Մարտիրոսյան Գևորգ Շիրազի
11. Գալստյան Ասպետ Սաղաթելի
12. Բաղդասարյան Կարեն Լորիկի
13. Հայրապետյան Հայրապետ Նորայրի
14. Չեյնալյան Մասիս Արամայիսի

Բացակայում է Տեղ համայնքի ավագանու թվով 1 (մեկ) անդամ՝ Արգամ Հովսեփյանը:

որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությունամբ հանդես եկավ Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդադյունյանը, ով միաժամանակ հայտարարեց, որ նիստին մասնակցում են ավագանու թվով 14 (տասնչորս) անդամները:

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝

Արավուսի վարչական ղեկավար Արթուր Զհանգիրյանը, համայնքի ղեկավարի խորհրդակալ Մարտունի Պողոսյանը:

Լ Ս Ե Ց Ի Ն .

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկուցող՝ Դ.Ղուլլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ և 65-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է**. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 1-ի առաջին նստաշրջանի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման երրորդ եռամսյակի ընթացքի մասին,
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կորնիձոր բնակավայրի համակցված փաստաթղթում փոփոխություն կատարելու, հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և անհատույց սեփականության իրավունքով հողամաս օտարելու մասին,
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կողմ - 13 դեմ - 0 ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Ձեկուցող՝ Դ.Ղուլլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթներով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետով, համայնքի ավագանին **որոշում է**.

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի բյուջեի 2021 թվականի երրորդ եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-6 հատվածներին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ